

ՀՕՀ թօննիք

ԿԵՑՔ

ՀԱՐՔԵՐՈՒԹԻՒՆ

ԹՐԱՎ Ա Խ Ա Ճ Ք

ՀՅՈՒՅՆԻ ԲԵՐԵՐ Ա Խ Ա Ճ Ք

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԵՂԱՌԱՋԱՐԱՐԱՐ

ԳՐԱԴԱՐԱՐԱՐ

85

Բ - 82

Թ Ի Փ Լ Ի Ա  
րար ազգային և պ օ լ ո ւ ս, Մակեդոնիա Խ Ս,  
1914



85

F-82

ամ

31 MAY 2008

19 NOV 2010

թ 0 Հ Բ 0 Կ Կ Ա Զ Ի 0

79

ԿԵ 88 Է

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Պատմուածք

գերմաներէնից թարգմանեց  
ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ Ա..

ԳԻՆԸ 8 հ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Եյէրտը. տպարան «ԵՊՕ» Խ Ա, Մուզեյսկի Ն 8.  
1914

108 8

06 MAR 2013

7914

188

## ԿԵՑՑԵ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Վաղ ժամանակ իտալիայում ապրում էր Գվալտիերի անունով մի երիտասարդ, որ Սալոցցո բգեշխութեան միակ շառաւիղն էր։ Դա կեանքն անց էր կացնում անհոգ և ուրախ։ մի օր չներով էր որսի գնում, միւս օրը բազէներով։ Ոչ կին ունէր և ոչ զաւակներ, և մտքով ամենին չէր էլ անցկացնում ամուսնանալ։

Առ հասարակ իրան շատ պարկեշտ ու մաքուր էր պահում և կանայք չափազանց գովում և համակրում էին նրան այդ յատկութեան համար։ Բայց նրա վարած սննող կեանքն ու ողջախոհութիւնն իսկի գուր չէին գալիս երկրի ազնուականներին, իշխաններին ու մեծամեծներին։ Նրանք անդադար կրկնում էին.

—Տէր, այդպիսի կեանք վարել չի կարելի, և երիք էր ամուրի մնալը, ամուսնացիր, որ ժառանդ ունենաս, թէ չէ քո մահից ետ մեր երկիրը կը մնայ առանց բգեշխի։ Եթէ քեզ համար անյարմար է հարսնացուի ման գալը, իրաւունք տուր մեզ, մենք այդ նեղութիւնը ուրախութեամբ կը քաշենք. հարսնացու կը ճարենք ազ-



9642-57

նիւ ընտանիքից, մի առ մի տեղեկանալով ծնողների մասին, կաշխատենք, որ հայրն ու մայրը լինեն պատուական ու առաքինի հոգիք, մի խօսքով այնպիսի հարսնացու, որ ամեն կողմով լինի արժանաւոր ու քեզ երջանկացնի.

Աչքի լոյս բարեկամներ, պատասխանեց մի օր Գվալտիերին, դուք ուղղակի ինձ ստիպում էք, որ կամքիս հակառակ բան բռնեմ, այսինքն ամուսնանամ, ինչ որ երբէք չեմ ցանկացել և որի մասին իսկի չեմ մտածել: Քաջ գիտեմ, թէ նրքան դժուար է առհասարակ այնպիսի ամուսին գտնելը, որ բնոյթի, վարք ու բարքի կողմից մեր ուղածը լինի: Մեծ մասով աղջիկները զգալու, մտածելու եղանակով դուրս են գալիս եռիտասարդների ցանկացածի հակառակը: Ուստի կատարեալ դժոխք է դառնում այն մարդու կեանքը, որին վիճակուած է լինում անհամապատասխան կնոջ հետ ապրել: Սխալ է, որ կարծում էք, թէ աղջիկներն ունենում են ծնողների վարքն ու բարքը և այդ հիման վրայ ցանկանում էք ինձ համար հարսնացու ճարել ազնիւ ընտանիքից: Ի՞նչպէս կարող էք ճանաչել հօրը կատարելապէս, կամ ի՞նչ գիտէք թէ նրա մայրը ի՞նչ ծածուկ արարքներ է ունեցել: Մի ըոպէ ընդունում եմ, որ հայրն ու մայրը պատուական, առաքինի անձինք են, բայց կարող էք երաշխաւորել, որ զաւակները նոյն կերպ կը լինեն:

Ի՞նչպէս նկատում եմ, դուք հաստատ վճռել էք ամուսնութեան ծանր լուծը ուսիս դնել. շնորհակալ եմ ձեր անկեղծ հոգատարութեան համար: Բայց չեմ կամենում, որ ապագայում ուրիշի մեղադրեմ, — չէ՞ որ կարող է պատահել, որ ձեր ընտրած հարսնացուն իմ ցանկացած կինը չը դուրս գայ. ուստի խնդրում եմ, թողէք, որ ընտրութիւնն ինքս անեմ, իմ ընտրածին—ամենայետին աղքատի աղջիկը կը լինի, թէ թագաւորի—եթէ ինչպէս բդեշխուհուն արժանն է, այնպէս չէք ընդունիլ ու պատուիլ, այն ժամանակ ես սրտումս անտանելի կսկիծ պիտի զգամ, որ ձեր խնդրը յարգեցի ու կամքիս հակառակ մտայ ամուսնութեան լծի տակ:

— Ա՛խ, ի՞նչ ես հրամայում, տէք, պատասխանեցին երկրի իշխաններն ու մեծամեծները, քո սիրու համար ամեն պայմանի պատրաստ ենք. միայն քոնն այն լինի, որ առանց յետագելու շուտով հարսնացու ընտրես, պսակուես, որ քո մահից ետ մեր սիրուն աշխարհը անգլուխ չը մնայ:

Երիտասարդ բդեշխին վաղուց դուր էր եկել տեսքով մի խիստ սիրուն աղջիկ, մի աղքատ ոչխարածի աղջիկ, որ ապրում էր նրա պալաղից դէնը մօտիկ շէնում: Մեր տարօրինակ բդեշխը միանդամայն հաւատացած էր, որ եթէ

այդ աղջկայ հետ պսակուի, երջանիկ կեանք է ունենալու: Ել ոչ դէս ու դէն ընկաւ հարսնացու փնտրելու համար, ոչ երկար մտածելով զուր տեղ զլուխ ցաւացրեց, ուղղակի վճռեց իրա հպատակ աղքատ աղջկանը կին ուզել: Իսկոյն կանչել տուեց նրա հօրը, որ շէնի խեղճերի խեղճն էր, ձեռ խփեց նրա հետ ու ասեց.

— Ա՛յ մարդ, լսիր, աղջկանդ հաւանել եմ և պիտի գամ նշան տամ: Քեզ յայտնում եմ, բայց դեռ տանըդ բան չասես մինչև իմ գալը:

Այդ այդպէս վերջացնելուց ետ Գվալտիերին կանչեց մօտ իշխաններին ու մեծամեծներին և յայտնեց նրանց.

— Սիրելի բարեկամներ, դուք ցանկանում էիք, որ ես ամուսնանամ. ահա կատարում եմ այդ ցանկութիւնը, լսելով աւելի ձեր թախանձանքին և ոչ թէ իմ սրտին: Յիշեցնում եմ ձեր խոստումը, չը մոռանաք, որ ում էլ ընտրեմ, դուք պիտի ընդունէք ու սիրէք իբրև բղեշխուհու: Տուած խօսքս ես հաստատ պահում եմ, դուք էլ պահեցէք ձերը: Յայտնում եմ, որ այս մօտիկ շէնում գտել եմ սրտիս ուզած հարսնացուն, շուտով նշան պիտի տանեմ, պսակուեմ ու բերեմ պալատը: Գնացէք, ինչպէս վայել է, ճոխ խնջոյքի պատրաստութիւն տեսէք. հարսնաիքի հանդէսը պիտի փառաւոր լինի: Տեսնեմ, թէ ինչ պատուով էք ընդունում ձեր տիրոջ ամուսնուն: Կարճ, հանդէսն այնպէս շքեղ կազ-

մեցէք, որ գոհ մնամ ձեզանից, ինչպէս որ, լիայոյս եմ, դուք գոհ էք մնալու իմ արած ընտրութիւնից:

— Ինչպէս կամենում ես, մենք յօժար ենք, պատասխանեցին հպատակները, հաստատ խօսք ենք տալիս, որ հարսնացուին, ում աղջիկն էլ լինի, ընդունենք իբրև բղեշխուհու և նրան պատուենք ու պաշտենք մեր գլխից էլ առաւել:

Այսպէս ասին իշխան ու մեծամեծ մարդիկ և շտապով իրար գլխով անցան հարսնակի պատրաստութիւնները տեսնելու: Բարի նախանձով վառուած բոլորը մրցում էին իրար հետ, որ խնջոյքը, որքան կարելի է, փառաւոր լինի: Գվալտիերին էլ իրա կողմից էր աշխատում, որ հանդէսը պակաս տեղ չունենայ. հրամայեց պալատի ներսը, դրւուզ գեղեցկացնել շքեղ զարդարանքներով: Հրաւէրներ ուղարկեց բարեկամներին, ազգականներին, զրացիներին, որ գանչ Աստծու ամեն բարիք ունէր, ինչու չէր կանչիլ, վայ խեղճի օրին: Յետոյ պատուիրեց հարսնացուի համար զգեստներ պատրաստել, այն էլ ինչ հիանալի, թանկագին կտորներից. կանչել տուեց հարսնացուի հասակի մի աղջիկ, չափուը բռնել տուեց նրա վրայ: Շինել տուեց մի քանի գոտիներ, զմբուխտէ մատանիներ, յակինթէ ականջի օղեր և ապա մի մարդարտաշար թագ, որ տեսնողի աչքը վրէն գնում էր. ինչ որ մի ապագայ բղեշխուհուն հարկաւոր է, ամենն

Էլ շինեց, պատրաստեց:

Հասաւ նշանակած օրը, բդեշխն ամեն բան կարգադրած, հեծաւ նժոյգը և անցաւ իշխանների, ազնուականների, մեծամեծների վլուխը, որոնք շտապել, եկել էին իրանց հպատակութիւնն ու խորին յարգանքը ցոյց տալու:

— Դէ, բարեկամներ, զիմեց նրանց, արդէն ժամանակ է, գնանք հարսնացուին բերելու:

Ամենն էլ ցնծաղէմ արշաւեցին բդեշխի ետեից ու մօտեցան այն շէնին, ուր ապրում էր հարսնացուի հայրը՝ Աղբիւրի ական առաջ կանգնած էր մի աղջիկ, աշխատում էր կուժը շուտ լցնել ու վազել, որ կարենայ միւս աղջիկների հետ գնալ բդեշխի հարսնիքաւորներին մտիկ անելու, որոնք արդէն անցնում էին իրա մօտով։ Գվալտիերին մի նայելով իսկոյն ճանաչեց աղջկան ու հարցրեց.

— Գրիգելդա, հայրդ ուր է:

— Տանն է, տէր, պատասխանեց աղջիկը կարմրելով։ Գվալտիերին երբ հասաւ նրանց դուռը, շուտով ձիուց իշաւ, շքախմբին պատուիրեց դուրմն իրան սպասել, ինքը Գրիգելդայի հետ մտաւ աղքատ Զիանուկօլօյի ցածրիկ խրճիթը և խօսեց.

— Ողջոյն քեզ, Զիանուկօլօ, եկել եմ տուած խօսք կատարելու, այսինքն Գրիգելդային ինձ համար կին տանելու։ Բայց նախ քան տանելը, կամենում եմ քո ներկայութեամբ նրան մի քա-

նի հարց տալ և իմ պայմաններն առաջարկել։ Առաջ արի, Գրիգելդա, և ասա ինձ. — Եթէ քեզ հետ ամուսնանամ, խոստանում ես, որ ամեն բանում իմ կամքով գնաս։ — Այս, պատասխանեց աղջիկը։ — Այդ մէկ։ Վրայ երկրորդը՝ խոստանում ես, որ ինչքան էլ անարգեմ կամ ինչպէս դաժան էլ վարուեմ, դու ոչ բողոքես և ոչ վըրդովուես։ — Այս, հանգիստ պատասխանեց աղջիկը։ — Վրայ երրորդ՝ արդեօք քաջութիւն կունենած անձայն հնագանդուելու, համբերութեամբ տանելու, ինչ անգութ բան էլ հրամայեմ։ — Այս, խոստանում եմ կատարել, ինչ որ հրամայես, պատասխանեց Գրիգելդան աչքերը գետնին գցելով։ Բդեշխը սրանց պէս մի քանի պայմաններ էլ առաջարկեց, ստացած պատասխաններից գոհ մնալով մօտեցաւ, բռնեց աղջկայ բազկից ու խրճիթը դուրս տարաւ։ Իրա ուղեկից իշխանների Շերկայութեամբ հանեց Գրիգելդայի հազի բոլոր շորերը և սկսեց հացնել նրան հարսնեկան նոր զգեստները ու զուգել, ինչպէս զատկի ձու։ ամենի վերջը մարզարտաշար թագն էլ զրեց նրա փարթամ ծամերով զարդարուած զլխին։ Այդպէս պճնուած Գրիգելդայի վրայ ում խելքն ասես գնում էր։

— Բարեկամներ, զիմեց բդեշխը իրա մեծամեծներին ու իշխաններին, ահա ձեր առաջը կանգնած է այն աղջիկը, որին որոշել եմ իմ ամուսինը դարձնել, եթէ նա էլ յօժարուի ինձ

հետ ապրել ու մինչեւ մահ ինձ պատկանել:

Յետոյ գարձաւ դէպի աղջիկը, որ ամօթի և  
բաղդաւորութեան ձեռից շուարած, զրեթէ բան  
չէր տեսնում, հարցը եց.

Գրիգելդա, ես կամենում եմ հաստատն  
ու ճշմարիտն իմանալ սրանց առաջ. անկեղծ  
ասա, յօժար ես, որ ես դառնամ քո ամուսինը:

— Այս, տէր, յօժար եմ, պատասխանեց աղ-  
ջիկը:

— Ես էլ իմ կողմից եմ յօժար, որ դու լի-  
նես իմ ամուսինը, ասեց բգեշիլը և անգին քա-  
րով ուկի մատանին հանելով ծոցից, ամենի  
ներկայութեամբ գրեց նրա մատը:

Գնացին եկեղեցի, պսակուեցին: Նորահար-  
սին եկեղեցուց դուրս բերելով նստացրին շքեղ  
զարդարած նժոյզի վրայ և առօք փառօք հասց-  
րին պալատը: Այստեղ բգեշին այնպիսի հան-  
դէսներ սարքեց, այնպիսի ճոխ խնջոյքներ տուեց  
հրաւիրեալներին, այնպիսի մեծածախս հարսանիք  
արեց, որ տեսնողը կը կարծէր թէ ֆրանկուանի  
թագաւորի աղջկանը հարս է բերել:

Իշխանները զարմացել էին տեսնելով, որ  
նոր զգեառների հետ նորահարսի մէջ մտել էին  
նոր սիրուն շարժուածք, նոր շնորհք ու նոր հո-  
գի: Առաջուց հասակը բարեկազմ էր, դէմքը  
սիրուն ու գողարիկ, այժմ թանկազին, փայլուն  
զգեստների մէջ Գրիգելդան այնքան հրապուրիչ  
ու գրաւիչ էր դառել, որ տեսնողն ասում էր —

չուտեմ, չը խմեմ, հէնց միայն նրա շէնք ու  
շնորհքին նայեմ: Նրան այն վիճակում տեսնողը  
չէր ասիլ, թէ նա տնանկ Զիանուկօլօյի ոչխարած  
աղջիկն է, այլ մի նշանաւոր իշխանի դուստր,  
որ աշխարհ է եկել երիտասարդներին միայն  
խելքահան անելու համար:

Գրիգելդան, բացի այն, որ հրեշտակի պէս  
գեղանի էր, ամուսնու մօտ էլ այնքան խոնարհ  
ու հնազանդ էր, որ բգեշին իրան համարում էր  
ամենաերջանիկ մարդը երկրիս վրայ:

Բգեշիուհի դառնալով միշտ քաղցր էր նայում  
դէպի հպատակները, նա այնպիսի ողորմած աչք  
ունէր դէպի փոքրաւորներն ու ստորագրեալ-  
ները, որ ամենը Գրիգելդային աւելի էին սիրում,  
քան իրանց զլուխը: Զը կար մէկը, որ նրան  
մի անգամ տեսնելով չը սիրէր ու Աստծուց  
նրա համար արևշատութիւն չը խնդրէր:

Երբ բգեշինը որոշեց աղքատ Զիանուկօլօյի  
աղջիկն ուզել, սկզբում նրա իշխաններից, բա-  
րեկամմերից շատերը միաբերան ասում էին, որ  
բգեշինը խելօք բան չի բռնել ոչխարած աղջ-  
կան կին ուզելով: Բոյց յետոյ իրանք զգացին  
իրանց սխալը. անդադար զովում էին նրա  
խելքն ու իմաստութիւնը. «Միայն բգեշինի սուր  
աչքը, ասում էին նրանք, կարող էր շինականի  
աղքատ ու կոշտ հագուստի մէջ նշանակած այն  
ընտիր առաքինութիւնները, որոնցով մեր բգեշ-

խուհին զարդարուած է»:

Գրիգելդայի խելքի ու շնորհքի համբաւը հետզհետէ տարածուեց հեռու երկրներ. այնտեղ էլ շատ մարդիկ, որոնք աննպաստ կարծիք էին կազմել բղեշխի վրայ նրա տարօրինակ արարքի պատճառով, ամենն էլ իրանց կարծիքը փոխեցին: Կային այնպիսիներն էլ, որ Գրիգելդայի բարեմասնութիւնները լսելով, բղեշխի բաղդին նախանձում էին:

Երկար չը քաշեց, չքնաղ բղեշխուհին յղիացաւ և աշխարհ բերեց մի սիրունիկ աղջիկ: Գվալտիերու համար այդ դարձաւ մեծ տօն ու ցնծութիւն: Բայց հէնց այդ բաղդաւոր օրերին նրա գլխի մէջ ծագեց մի տարօրինակ միտք: Նա ցանկացաւ փորձել իրա կնոջ բնաւորութիւնն ու համբերութիւնը և այդ նպատակով ենթարկել նրան անտանելի ցաւե ու զարհուրելի կսկիծի: Նախ և առաջ սկսեց անմեղ Գրիգելդային անարգել կոպիտ խօսքերով: Այդ վիրաւորանքը լուռ, անմոռնչ տարաւ: Երկու օր անցնելուց ետ բղեշխը յոնքերը կիտած մօտեցաւ կնոջն ու ասեց.

— Գիտես ինչ. արդէն հպատակներս սկսել են բացարձակ տրտունջներ անել, որ ես ինձ համար կին եմ ընտրել մի աղքատի աղջիկ, բոլորովին հասարակ ծագումից, որ իսկի վայել չէ բղեշխին. մանաւանդ նրանք խիստ դժգոհ են նրանով, որ դու ազատուել ես ու առաջին անգամ աշխարհ բերել աղջիկ և ոչ տղայ: Այդ

չարագուշակ նշան է թւում նրանց իմ աշխարհի համար:

— Իմ դլիսի տէր, հանդարտ խօսեց Գրիգելդան առանց դէմքի վրայ որևէ վրդովմունք երկացնելու, արա ինչպէս կամենում ես, ինչ որ պահանջում է քո աստիճանի ու անուան պատիւը, օգուալ և փառքը: Ինչ էլ անես, ես յօժար եմ հնազանդութեամբ լսելու ու կատարելու. լաւ եմ յիշում, որ ես քո հպատակների մէջ ամենայետինն էի. ամեննեին չեմ մոռացել ես այն, ինչ որ ինձ պէս աղքատ աղջկայ համար արել ես, խոստովանում եմ, որ միանգամյն անարժան եմ այն փառքին, որին քո ուղղործութեամբ հասել եմ:

Այս պատասխանը շատ գուր եկաւ բղեշխին. ակներև տեսաւ, որ բարձր դիրքի հասնելը նրան խսկի չի գոռողացրել: Մի քանի օրից ետ բղեշխը դարձեալ ասեց Գրիգելդային:

— Հասարակ թէ բարձրաստիճան հպատակներս կտրական յայտնում են, որ աշքով աչք չունեն քո աղջկան տեսնելու: Մի հնար պիտի մտածել նրանց խիստ յուզմունքի առաջն առնելու համար:

Ասեց ու հեռացաւ:

Կարձ ժամանակից ետ երկաց բղեշխի հաւատարիմ ծառաներից մինը և արտասուքն աշքերին խօսեց:

— Ողորմած տիրուհի, ներիր, որ ակամայ

անախորժ հրաման եմ բերել բդեշից. եթէ այն չը կատարեմ, պիտի կեանքից զրկուեմ: Նա հրամայել է... որ ձեր աղջիկն առնեմ ու... տանեմ...

Ծառան արտասուրից խեղդուելով չը կարաց խօսքը շարունակել: Թշուառ կինը, որ ծառայի կցկտուր բառերը լսելու հետ դիտում էր նա և նրա վշտահար դէմքը, իսկոյն մտաբերեց ամուսնու ասածները ու հաստատ հզրակացրեց, որ հրամայած է իրա սիրասուն զաւակը տանել և սպանել: Կսկծալի սրտով ընկաւ օրօրոցի վրայ, համբուրեց մի քանի անգամ երեխային, հանեց օրօրոցից ու մայրական բերանով օրհնեց: Ուղիղ է, անչափ ծանը էր մօր սրտի համար մատղաշ զաւակից զրկուելը, բայց նա ամուր կամքով զսպեց ներսի կսկիծը, երեխան տուեց ծառայի գիրկը և ասեց.

—Ահա առ, տար և վարուիր սրա հետ այնպէս, ինչպէս քո տէրը հրամայել է, բայց լսիր՝ ինչ եմ աղաչում, չը թողնես մարմինն ընկած, որ գաղանների ու թոշունների կեր լինի... եթէ այդպիսի բան քեզ չի հրամայած:

Ծառան երեխան զրկին հեռացաւ և բդեշից մօտ տանելով, մանրամաս պատմեց Գրիգելդայի բերանից լսածները: Գվալտիերին չափազանց զարմացաւ կնոջ ամուր սրտի և հաստատ կամքի վրայ, բայց իրա մտաղրութիւնը չը փոխեց կատարեց, ինչ որ նախօրօք որոշել էր:

Անցաւ բաւական ժամանակ, Գրիգելդան նորից յղիացաւ և մի գեղեցիկ տղայ բերեց. մայրական վշտակոծ սիրտը միխթարութիւնով լցուեց: Բդեշից ցնծութիւնն էլ սահման չունէր. օր չէր լինում, որ մի քանի անգամ նորածնին չը զրկէր, համբուրելով չը հրճուէր: Բայց տարին դեռ չը լրացած սատանան նորից մտաւ նրա սիրտը. կնոջ բնաւորութիւնը փորձելու համար արածը քիչ համարելով, կամեցաւ աւելի տաժանելի կսկիծի միջոցով ըննել բամբաղդ կնոջ համբերութիւնը:

Մի օր շինծու զայրոյթը դէմքին ներս եկաւ ու Գրիգելդային ասեց.

—Հպատակներիս երեսներին նայել անկարելի է, այն աստիճանի նրանք վրդովուած են: Դրա պատճառը քո նորածին տղան է: Այն, ինչ որ ինձ համար միխթարութիւն է, նրանք համարում են անարգանք և անպատւութիւն: Ուղղակի զարհուրում են, երբ մտածում են, թէ ինձնից ետ նրանց հրամայողն ու բդեշիը լինելու է ոչխարած Զիանուկօլօյի թոռը: Թէև անտանելի կսկիծ է լինելու սրտիս, բայց իշխանների ու մեծամեծների տրաունչից ազատուելու համար ստիպուած եմ այս երկրորդ զաւակի հետ էլ վարուելու այնպէս, ինչպէս մի ժամանակ առաջինի հետ վարուեցի: Եւ վերջը, ինչպէս նկատում եմ, ստիպուած պիտի լինեմ քեզիմ տանից հեռացնել, ուրիշ նոր կին բերել ար-

ժանաւոր ժառանգ ունենալու համար, եթէ այդ չանեմ, հպատակներս անպատճառ կարտաքսեն ինձ իմ երկրից:

Գրիգելդան համբերելով խոնարհութեամբ լսեց իրա ամուսնուն ու անվըտով պատասխանեց:

— Տէր, աղաջում եմ, արա ամեն բան, ինչ-պէս քո կամքն է, իմ մասին ամեննին մի անհանգստանալ, ես հող ու մոխիր եմ քո համեմատութեամբ: Աշխատիր լինել երջանիկ և գոհ: Աշխարհիս վրայ ոչինչ չըկայ ինձ համար աւելի թանկ, քան թէ քո բաղդաւորութիւնը: Ինչ էլ հրամայես, հնազանդութեամբ կը կատարեմ:

Այս խօսքերից ետ մի քանի օր հազիւ էր անցել, Գվալտիերու հաւատարիմ ծառան երևաց, նոյն կերպով առաւ Գրիգելդայի գրկից մանուկին ու հասկացրեց, որ տանում է սպանելու: Խեղճ կինը քիչ մնաց, որ կսկիծից ցնորուի: Բայց դարձեալ իրան զսպելով, ամուր կամքի ուժով կարողացաւ տանել այդ կորուստն էլ, առանց ողբի ու բողոքի: Սրտի խորքում թագցրեց մօր անասելի վիշտն ու մնաց հանգիստ, անվըտով, իբր ոչինչ չը պատահած: Բղեշին այս տեսաւ ու զարմացաւ ինքն իրան. «ոչ, ոչ, կրկնում էր նա, Գրիգելդայի տեղ ուրիշ կին չէր կրկնող այդպիսի կսկիծին գիմանալ»: Եթէ Գվալդարու աշըռով տեսած չը լինէր, թէ կինն ինչ քնքութեամբ էր գուրգուրում ու խնամում զաւակներին, կարող էր մի բոպէ կարծել, որ մա-

նուկների կորուստը նրա համար ցաւալի չէր: Բայց այժմ կնոջ վարմունքն ու շարժմունքը դիտելով, համարում էր պարզ ապացոյց նրա մեծ խելքի ու իմաստութեան:

Իշխաններն ու մեծամեծները, լսելով բղեշի անգութ արարքը զաւակների վերաբերեալ, խիստ գառնացած էին նրա գէմ, բայց աշկարայչ չէին անում իրանց անբաւականութիւնը. նրան անուանում էին անխիղճ, անհոգի հայր, իսկ բղեշին չէին կարողանում առանց ափսոսալու, առանց արտասուելու մտիկ անել: Գրիգելդային շըջապատող կանայք շատ անգամ ցաւակցում էին նրան. անկարող լինելով իրանց փղձուկը պահել, ողբում էին անմեղ մանուկների կորուստը. բայց նա միշտ հանգստացնում էր նրանց.

— Մի՞ք ողբալ, սիրելիք, ես նրա համար լուռ, անմոռնչ զոհ բերի զաւակներիս, որովհետեւ խոստացել եմ ամեն ինչ հնազանդութեամբ տանել: այդպէս էր կամենում իմ տէր բղեշիը:

Ժամանակ անցնելուց ետ, սատանան նորից մտաւ բղեշի սիրտը. ուզեց փորձել կնոջ անձնուիրութիւնը, հնազանդութիւնը և վերջին անգամ աւելի սուր կսկիծ պատճառել խեղճ Գրիգելդային: Մտերիմ իշխաններին կանչելով իրա մօտ՝ յայտնեց.

— Ես այլս չեմ ուզում Գրիգելդային իբրև կին պահել: Երիտասարդ հասակում խելքու



\* ZUUN-ARM.CSR

փչեց, յիմարութիւն արի, նրան ընտրեցի ու պսակուեցի: Այժմ տեսնում եմ, որ մեծ սխալ եմ արել հասարակ ծագումից աղջիկ ուզելով: Այդ սխալն ուղղելու համար մտադիր եմ դիմել չոգեսր Տէրին, որ կնոջիցս բաժանի և իրաւունք տայ ուրիշ արժանաւորի հետ պսակուել:

Անաշառ և արդարասէր իշխանները հաւանութիւն չըտուին բգեշխի մտադրութեանը. միաբերան դատապարտելով յորդորում էին ետ կենալ այդ մտքից: Բայց նա թոյլ չըտուեց, որ երկար առարկութիւններ անեն. խիստ դէմք առած կանգնեց տեղից ու նրանց ընդհատելով, կարճ ու կտրուկ ասեց.

— Իմ կամքն այս է, այսպէս պիտի լինի:

Շուտով այս բանն ընկաւ Գրիգելդայի ականջը. խեղճի սիրտը կտոր կտոր էր լինում, երբ մտածում էր, թէ պիտի վերադառնայ հօր անշուր խրճիթը, նորից ոչխարներ արածացնի ու հեռուից տեսնի, որ իրա սիրած ու պաշտած ամուսինը ուրիշ կնոջ է պատկանում: Շատ էլ այս մտածմունքները նրա հոգին խաշում էին, բայց նա իրա մէջ վճռեց համբերել նախկին մեծահոգութեամբ ու հաստատակամութեամբ դառնակատագրի վերջին հարուածներին:

Երկար չը քաշեց, չոգեսր Տէրից թուղթ եկաւ, որն իրաւունք էր տալիս Գվալտիերուն հեռացնել պալատից Գրիգելդային և ամուսնանալ ուրիշ աղջկայ հետ: Բղեշխի հրամանով պալատը

ժողովուեցին բոլոր մեծամեծներն ու ազնուականները: Ահազին բազմութեան առաջ կանչել տուեց Գրիգելդային ու այսպէս խօսեց.

— Ահա Հոգեոր Տէրից եկած թուղթը, որի զօրութիւնով քեզ պիտի թողնեմ և ուրիշին կինուզեմ: Դրա գլխաւոր պատճառը մեր ծագութման իշխատ զանազանութիւնն է. իմ նախնիքամենը եղել են ազնուարին անձինք, բարձր տոհմից ծագելով կառավարել են այս երկիրը: Ինքդլաւ գիտես, որ իմ հպատակ իշխաններից շատերը երևելի, զօրեղ կալուածատէրեր են և իրանց ձեռի տակ ունեն անթիւ հարկատուներ. իսկ քոնախնիք դրա հակառակ եղել են հասարակ ծագումի մարդիկ, սոսկ հողագործներ: Քեզ անկարելի է մասլ Մալուցցոյի բգեշխի կին, այսօրսւանից դու ազատ ես. կարող ես քո բերած օժիտը վերցնել ու հօրդ տուն վերադառնալ. ես արդէն ընտրել եմ ուրիշ արժանաւոր կին, բոլորովին յարմար իմ դիրքին ու աստիճանին:

Գրիգելդան թէև նեղսրտած էր, բայց ուրիշ կանանց պէս լաց չեղաւ. ամեն ճիգ թափելով զապեց արտասուը ու հեկեկանք, ծածկեց սիրտը շամփուղ դառնագոյն վիրաւորանքը ու հանդարտեղանակով խօսեց.

— Տէր, ես միշտ էլ տեսնում էի, որ իմ հասարակ ծագումը ամեննեին չի պատշաճում քո բարձր, աղնիւ ծագումին: Ինչ դիրք ու փառք որ վայելում էի, դա Աստծու և քո ողորմու-

թեան շնորհքն էր, բայց հոգիս զգում էր, որ  
այդ փառքն ու բաղդաւորութիւնը ինձ համար  
երկարատև չեն լինելու: Այժմ երբ քեզ հաճելի է  
շնորհածդ ետ առնել, ես չեմ ընդգիմանալ: Զէ  
որ խոստացել եմ անմոռւնչ հպատակուել իմ  
տիրոջ կամքին: Ահա նշանի մատանին, խնդրեմ  
յետ ընդունիր: Դու հրամայում ես, որ բերածս  
օժիտը յետ տանեմ: Այնքան բան չեմ բերել, որ  
պարկեր լցնեմ, ջորուն բարձեմ: Ես լաւ եմ  
յիշում, որ դու ինձ հայրական տնից մերկ ես  
վերցրել: Եթէ քո անունին վայել է, որ այս պա-  
լատում երկու զաւակ ծնող մարմինը բոլորովին  
մերկ վերադառնայ ծերունի հօր մօտ, ճանապար-  
հին մարդկանց ծաղրի նիւթ դառնալով, ես պատ-  
րաստ եմ քո այդ կամքն էլ կատարել: Քո տուն  
եկել եմ իբրև կոյս աղջիկ, բայց այդ հպարտու-  
թիւնն այժմ յետ չեմ տանում. իբրև հատուցումն  
դրա, աղաչում եմ, թոյլ տուր դոնէ մի շապիկ  
մնայ հագիս, որ մարդկանց աշքից ամօթս ծած-  
կի, պաշտպանի:

Գվալտիերին կնոջ այդ խօսքերը լսելով հա-  
մարեա սրտի մէջ լաց էր լինում, բայց արտա-  
քուատ շարունակում էր մնալ դաժան, քարասիրա-  
վերջն առանց դէմքի խստութիւնը մազաչափ  
փոխելու ասեց.

— Երբ այդքան աղաչում ես, մի շապիկ կը  
թողեմ մնայ հոգիու:  
Բղեշի մօտիկ մարդիկ միջնորդեցին, խընդ-

ըեցին, որ դոնէ մի ձեռք հագուստ տայ կնոջը-  
— Տէր, դա ամբողջ 13 տարի Սալուցցօյի բղեշ-  
խռահին է եղել, որի առաջ մենք պատկառանքով  
խոնարհել ենք մեր գլուխները, ի՞նչպէս կարելի  
է, որ այսօր նա դուրս երեայ կիսամերկ, իբրև  
մուրացկան, իբրև ոճրագործուհի, իբրև կանանցեց  
ամենայետինը: Ո՞չ, մեր գլուխն այդ չի վերցնիլ:

Այս խօսքերը թէկուզ բղեշխին առած, թէ-  
կուզ մի քարի. ոչ մի միջնորդութիւն ու աղա-  
շանք չազդեց նրա վրայ: Գրիզելդան—վայ նրա  
քամբաղդ օրին—մի հատիկ շապկով, կիսամերկ,  
ոտաբորիկ, գլխաբաց, մազերը շաղ տուած, գառ  
արտասուբները գլորելով դուրս եկաւ պալատից:  
Նրա յետևից արիւն արտասուք էին թափում  
պալատի ծառաներն ու սպասուհիք, տեսնէ  
իրանց բարեսիրտ տիրուելուն այսու՝  
ճակում, իրա աղքատ հօր տ.

Զիանուկոլոն երբէք հա-  
ցել, թէ իրա աղջիկը բղեշխ  
կան կը մնայ. նա ամեն օր ս  
էր մի ձախորդութեան, մի  
ուստի Գրիզելդայի շինական  
որ բղեշխը նշան տալիս ն  
հայրը հաւաքել, խնամքով  
աղջիկը մետակ շապկով և  
կոլոն հանեց նախկին շորեր  
նի: Գրիզելդան վճռել էր մ  
ծահոգի, ուշ ըբդարձնել դա

Նարդար հարուածների վրայ։ Նախկին բգեշխու-  
հին սկսեց բանել ոչխարած հօր տանը, կատա-  
րելով ամեն տեսակ հասարակ աշխատանքներ։

Զանցկացաւ մի բանի օր, բգեշխը յայտնեց  
իրա մօտիկ անձերին— ազնուականներին, մեծա-  
մեծներին, որ նա նշանուել է Պանագոյի մեծա-  
նուն կոմսի աղջկայ հետ։ Հրաման տուեց, որ  
հարսանիքի հանդէսի համար մեծ պատրաստու-  
թիւններ տեսնեն և յետոյ մի մարդ էլ ուղար-  
կեց, որ Գրիգելդային կանչեն։ Ամենը զարմա-  
ցան, թէ Գրիգելդային ինչու է կանչում։ Երբ  
Գրիգելդան երեաց, բգեշխը սառնասիրու կեր-  
պով ասեց նրան։— շուտով այստեղ կը հասնի իմ  
ընտրած հարսնացուն։ Ես ցանկանում եմ, որ  
սրա առաջին ոտնամուտը փառահեղ լինի և իրա  
գիրքի համար ապատիւ ու մեծարանք ստանայ։  
Դու գիտես, որ ես իմ պալատում այնպիսի  
հմուտ սպասուի չունեմ, որ սենեակներն ու  
դահլիճները, ինչպ էս հարկն է, կարգի բերել  
իմանայ այս մեծ հանդէսի համար։ Այդ պար-  
տականութիւնը զն ում եմ քեզ վրայ, որովհետեւ  
դու ամենից լաւ չանօթ ես իմ պալատի հան-  
գամանքներին։ Ին չպէս կուզես, կարգադրիր,  
հրամաններ տուր բոլոր ծառաներին, վաղօրօք  
հրաւէրներ ուղար կիր այն տիկիններին, որոնց  
արժանի ես համար ում հարսանիքի հանդէսին։  
Մի խօսքով, ովքեր կը գան այս պալատը, ընդու-

նիր, հիւրասիրիր իրու տիրուհի և հարսանիքը  
վերջանալուց ետ կրկին ազատ ես, կարող ես  
գնալ հօրդ տունը։

Թէպէտ բգեշխի ամեն մի խօսքը սուր  
դանակի պէս ծակում էր Գրիգելդայի զգայուն  
սիրուը, բայց որովհետեւ ամեն փառը կորցնելուց  
ետ չէր դադարում քարասիրտ ամուսնուն սիրե-  
լուց, ուստի խոնարհաբար ասեց։

— Տէր, ես ամենայն յօժարութեամբ կը  
կատարեմ, ինչ էլ հրամայես։

Եւ համբերեց խեղճը, որ տեսնի վերջն ինչ  
է լինելու։

Պալատի նախկին տիրուհին, շինական կո-  
պիտ հագուստում, սկսեց սենեակները, դահլիճ-  
ները, սրբել, վեր բարել, կարգի բերել բազ-  
կաթուններն իրանց տեղերում դարսել, նախշաւն  
գորգերը փոել, սեղան պատրաստել, կերակուր-  
ներին հետևել, իրու հասարակ աղախին կամ  
սպասուհի ամեն բանի հասնել։

Շարունակ ոտի վրայ էլ. ձեռները մի  
ըոպէ հանգիստ չառան, մինչեւ որ պալատի մէջ  
ամեն գործ, հասարակից սկսած մինչև կարեռը,  
կարգադրեցին։ Այդ վերջացնելուց ետ մար-  
չը կարգադրեցին։ Այդ վերջացնելուց անունով, բոլոր ազ-  
նուական տիկիններին հրաւիրեց։ Ամեն ինչ  
պատրաստ էր, մնում էր հարսանիքի նստելը։

Դրա օրն էլ հասաւ։ Գրիգելդան ըըաշուեց  
իրա հագի անձունի շորերից, բարեսիրտ աի-

բուհու պէս ուրախ դիմաւորեց մեծաշուք օրինարդներին, տիկիններին և ընդունեց:

Ահա Պանագոյի երիտասարդ կոմսն էլ մեծ շքախմբի հետ հասաւ Սալուցցօյի բգեշխի պալատը. 13 տարեկան մատաղահաս հարսնացուի ու նրա 6 տարեկան եղբօր հետո: Ճաշի ժամանակն էր, զիւղերից, մօտ քաղաքներից ահագին ժողովուրդ եկել, խոնուել, անհամբեր սպասում էր նորահարսի երեալուն:

Ազնուական տիկիններն շտապեցին առաջ, նորահարսին իրանց մէջ առնելով առօք փառօք տարան դահլիճ: Գրիգելդան ևս առաջ գնալով խոր գլուխ տուեց ու ասեց.

— Բարի լինի գալուստդ, տիրուհի:

Հարսանիքի սեղանը պատրաստ էր, ամենը մօտեցան, որ տեղ բռնեն, Դեռ ճաշ չըսկսած, ազնուաշուք տիկիններն ու օրիորդները թախանձեցին բգեշխին, որ կամ նախկին բգեշխունուն հեռացնի դահլիճից, կամ գոնէ իրա նախկին շքեղ զգեստներից մէկը տայ հագնելու, որ նա օտար հիւրերի առաջ շինական կոպիտ հագուստով չերեայ: Ամեն թախանձանք զուր անցաւ:

— Ոչ, յարգելի տիկիններ և օրիորդներ, նա այնպէս պիտի երեայ օտար հիւրերին, ինչպէս որ կայ, կտրեց նրանց խօսքը Գվալտիերին:

Ներկայ եղողների հայեացքները դարձած էին դէպի նորահարսը. ամենն էլ ուտել խմելը թողած՝ նրան էին աչքով չափում ու ոչ մի պա-

կասութիւն չէին գտնում: Հանգիսականները իրար ականջի փսփսալով ասում էին. —

— Բդեցի նախկին գեղեցիկ կնոջը հեռացնելով ընտրել է աւելի գողարիկը:

Ինքը Գրիգելդան խելքահան եղած մատաղահաս հարսնացուի գեղեցկութիւնով, առանց զգացածը ծածկելու անկեղծ սրտով մէկ նրան էր գովում, մէկ նրա եղբօրը:

Բգեշխը տեսաւ, որ իրա բոլոր իղձերը կատարուել են, բաւական համարեց կնոջը պատճառած տանջանքները. զգաց, որ գործ գրած արտասովոր միջոցները անզօր դուրս եկան նրա անհուն համբերութեան մօտ, համոզուեց, որ աշխարհի վրայ չըկայ ոչինչ, որ կարենայ նրա ամուր կամքը թուլացնել: Զգում էր, որ այսուհետեւ իբրև ամուսին կարող է լիուլի հաւատալ Գրիգելդային, երբ նրա մէջ կայ այսքան իմաստութիւն, այսքան համբերութիւն: Գրիգելդան ծանր կալիճը ամեն հնարով թագնում էր սրտի խորքում: Սակայն սրատես բգեշխը նրա վիշտը պարզ նկատում էր նրա դէմքից ու ձայնից: Արդեօք այրող վիշտը վերանորոգելու համար, թէ նրա համբերատար սրտին վերջին անգութ հարուածը տալու—յանկարծ բոլոր հիւրերի ներկայութեամբ Գվալտիերին իրա առաջ կանչեց Գրիգելդային ու կծու հեղնանքով հարցըեց.

— Ի՞նչ է քո կարծիքը իմ հարսնացուի մասին, հաւանում ես թէ չէ:

— Ողորմած տէր, այսպիսի աննման հարս-  
նացուին ով չի հաւանիլ. պատասխանեց Գրի-  
գելդան, ես հիացած եմ նրանով. Որքան որ  
հաճելի ու գեղեցիկ է արտաքինով, եթէ այնքան  
էլ իմաստուն ու կատարեալ լինի, այն ժամա-  
նակ վստահ կարող եմ ասել, որ գու նրա հետ  
ապրելով կը լինես. ամենաերջանիկ մարդը աշ-  
խարհիս վրայ:

Բայց տէր, մի բան եմ խնդրում քեզանից:  
Աղաջում եմ, որ այս ծաղկափթիթ նորահարսին  
չը տանջես այն կնոջ նման, որ սրանից առաջ  
քո ամուսինն էր: Սա քո պատճառած կսկիճնե-  
րին չի կարող դիմանալ, նախ՝ որ չափազանց  
մսաղաշ հասակումն է, երկրորդ՝ փարթամ ապ-  
րած է ու քնքուշ մեծացած. իսկ քո նախկին  
ամուսինը մանկութիւնից սովոր լինելով աղքատ  
ապրուստի, ընտելացել էր ամեն զրկանքի համ-  
բերելու:

Գվալտիերին զարմացաւ Գրիգելդայի ան-  
նախանձ սրտի վրայ. տեսնում էր, որ մանկա-  
հասակ աղջիկը իրա տեղը բռնելով բգեշխունի է  
դառնալու, դարձեալ բարեսրտութեամբ նրա  
լաւն էր խօսում: Բգեշխը դէմքը քաղցրացնելով  
ձեռը մեկնեց, Գրիգելդայի բազուկը բռնելով  
նստացրեց իրա մօտ: Ամենն էլ զարմացան այս  
տարօրինակ արարմունքի վրայ: Գրիգելդայի  
սիրտը թրթում էր, ամբողջ մարմնով գողում:  
Բգեշխը քիչ լուռ մնալուց ետ խօսեց.

— Վերջապէս ժամանակ է, Գրիգելդա, ո՞՛  
գու վայելես քո համբերութեան պտուղը: Կար-  
ծում եմ ժամանակն է, որ բանամ այն մարդ-  
կանց աչքերը, որոնք հաւատացած էին, թէ ես  
մի անխիղճ, անգութ արարած եմ: Թող հիմի  
հասկանան, որ իմ իւրաքանչիւր գործողութիւնը  
վաղօրօք մտածուած ու կշռած էր: Քեզ փոր-  
ձութիւնների ենթարկելով ես հասայ դրած  
նպատակիս. քեզ սովորեցը թէ բնչպէս պիտի  
տանել ամուսնութեան ծանր խաչը և դառնալ  
ամեն կողմով օրինակելի կին: Հպատակներին  
առիթ տուի, որ արժանապէս գնահատեն քո  
հազուագիւտ առաքինութիւնները և իմանան պատ-  
ուել ու մեծարել քեզ իբրև իրանց տիրունու:

Արած դիտողութիւններիցս այն համոզման  
եմ եկել, որ բանի կենդանի եմ, քեզ հետ ապ-  
րելով կարող եմ միշտ հանգիստ, երջանիկ լի-  
նել: Քեզ հետ ամուսնանալիս ամենեին յոյս  
չունէի, թէ այսպիսի հետևանքի կը հասնեմ:  
Կեցցես դու և քո համբերութիւնը, որ այնքան  
ցաւ ու կսկիճն անմոռնչ տարար: Իմ անգին  
Գրիգելդա, այն սիրու փոխարէն, որ գու խօսքով  
ու գործով յոյց տուիր, այն երջանկութեան ու  
ուրախութեան փոխարէն, որի միակ պատճառը  
զնւ ես եղել և այսուհետեւ էլ դնւ ես լինելու,  
ես կամենում եմ մի քանի ըոպէի մէջ քեզ  
վերադարձնել այն ամենը, ինչ որ քեզանից  
խլել եմ տարիների ընթացքում և քաղցը բալա-

սանի ուժ ունեցող մի երկու խօսքով բուժել քո  
սրտի վէրքերը առմիշտ։ Քեզ եմ ընծայում այս  
նորափթիթ աղջիկը, որին իմ հարսնացուն կար-  
ծեցիր, քեզ եմ ընծայում նոյնպէս այս աղջկայ  
եղբայրը։ Գրկիր, համբուրիր, դրանք օտարներ  
չեն, իմ պատուական Գրիգելդա, դրանք իմ և քո  
հարազատ զաւակներն են, որոնց մասին դու և  
այստեղ ժողովուածներն այն կարծիքն ունէիք,  
թէ ես անզթօրէն սպանել եմ տուել։ Ոչ, ես նրանց  
ուղարկել էի Բօլոնիա, հօրաքրոջս մօտ, որ խը-  
նամքով մեծացնի և կըթիչ Վերջը մարդ ուղար-  
կեցի հօրաքրոջս որդու մօտ, որ երկու երե-  
խանցը վերցնի, դայ, հետք բերելով պատուաւոր  
անձերից բաղկացած մեծ շքախումք. իմ պատ-  
ուէրի համեմատ նա այնպէս էր ցոյց տուել մա-  
տադահաս աղջկանը, թէ նրան բերում է բդեշին  
համար հարսնացու։ Հոգեոր Տէրի թուղթը կեղծ  
էր։ Այս բոլոր փորձութիւնները կատարուել են  
յանուն մեր բախտաւորութեան։ Ես այսօր նորից  
քո ամուսինն եմ, ինձ համար չըկայ աշխարհում  
աւելի սիրելի բան՝ քան թէ դու. այսուհետեւ  
համարձակ կարող եմ ինձ համարել բոլոր ամու-  
սինների մէջ բաղդաւորագոյնը։

Գվալտիերին այլ ևս չը կարաց սառնասիրտ  
պահել իրան, ուրախութեան արտասուքն աչքե-  
րից յորդառատ թափուելով ողողեցին նրա դէմ-  
քըն ու կուրծքը։ Գրիգն առնելով սքանչելի Գրի-  
գելդային համբուրեց երեսը, ձեռութիւնը

բռնած կամենում էր տանել աղջկայ մօտ, որ  
տեսածների ու լսածների վրայ մնացել էր շուա-  
րած։ Ներկայ եղողները զարմացած նայում էին  
մէկ բդեշին, մէկ Գրիգելդային, մէկ մատղաշ  
նորահարսին։ Ազնուական տիկիններն այժմ վրա-  
տահ մօտենալով բդեշին՝ նրա ձեռից խլեցին  
Գրիգելդային և զրեթէ իրանց թևերի վրայ  
բարձրացրած տարան կողքի սենեակը, վրայից  
հանեցին շինական կոպիտ հին շորը, հագցրին ի-  
րա թանկազին զգեստներից մինը ու յետ բերին  
դահլիճը։ Գրիգելդան ցնծուն դէմքով մօտ գնաց  
զաւակներին ու մէկ մէկ գրկելով, համբուրելով  
կարօտ սիրաը հովացրեց։

Սկսուեց մեծ ճաշկերոյթը. ազնուական  
մարդ թէ կին—ամենն էլ ուրախ էին և մրցում  
էին իրար հետ, որ այդ տօնը փառահեղ լինի.  
հանդէսը տեեց օրեր, շաբաթներ. էլ բերան չը  
մնաց, որ չը գովի Գվալտիերու խելքն ու իմաս-  
տութիւնը։ Հիւրերն ուրախ սրտով ցրուեցին ի-  
րանց տեղերը։ Բօլոնիա դարձաւ նոյնպէս Պա-  
նագոյի կոմաը իրա շքախմբով։

Բդեշին Զիանուկօլոյին հրտեիրեց իրա պա-  
լատը և ազնուականների շարքը դասեց։ Վիճակը  
միանգամայն ապահով էր, ամենը յարգում էին  
նրան իբրև մեծ բդեշին անօրը. ծերութիւնը  
քաղցր անցկացրեց և խաղաղ շունչը փչեց աղջ-  
կայ թևերի վրայ։

Իտալիայում բդեշինը համարւում էր ամե-

Նաերջանիկ ամուսինն ու հայրը: Զըդիտէր ի՞նչ-  
պէս պաշտի ու սիրի իրա աննըման Գրիգելդա-  
յին, որ իրա անձի օրինակով ապացուցեց, թէ  
շատ անդամ ազնուութեան, բարեսրտութեան,  
մեծահոգութեան, համբերատարութեան պէս երկ-  
նային պարզեներ աւելի շուտ անշուք խրճիթում  
կարելի է գտնել, քան թէ իշխանական շքեղ  
պալատներում:



Թիֆլիսի գրախանութեառում վաճառում են մեր  
աշխատութիւնները:

1. ԾՈՎԻՆԱՐ. գ. տպ.	X	.	.	25	4.
2. ՇԵՆ ԹԱԴԱՒՐԻ ԱՂՋԻԿ. գ. տպագր.	X	.	.	35	»
3. ԵՐԿՈՒ ԱՂԲԵՐԱՑԵՂ. բ. տպ.	.	.	.	30	»
4. ԱՍՏՈՒԱԾ ԱՂԲԱՏԻ ԿԵՐՊՈՒՄ	X	.	.	20	»
5. ՀԵՔԻԱԹՆԵՐ.	.	.	.	30	»
6. ԵՐԿՈՒ ԶՐՈՅՑՑ (ա. Երեք խոստովանութիւն)	.	.	.	30	»
պատկերով {բ. Երեք ոսկու պատմութ.}	.	.	.	30	»
7. ԱՆՄԵՌ ԱՇԽԱՐՀ.	.	.	.	8	»
8. ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ.	.	.	.	30	»
9. ԾԵՐԵՐԻ ԶՐՈՅՑՆԵՐԻՑ. պատկերով.	.	.	.	20	»
10. ՄԻՏԱՇԱՀ ԲԱՆԵՐ	.	.	.	20	»
11. ԱՍՏՈՒ ԴԱՏԱՍՏԱՆ.	X	.	.	5	»
12. ԱՍՏՈՒԱԾ ԶԼ ՃԱՆԱԶՈՂ.	.	.	.	10	»
13. ԳԱԼՈ ԱՓՕ. բ. տպ.	.	.	.	12	»
14. ԺԱՄԱՆԱԿ ՈՍԿԻ. պատկերներով.	.	.	.	40	»
15. «ՍԻՐՏ» գրքից պատկերներով.	.	.	.	40	»
16. ՔԱԶ ԱՂԱՄԻ, ՍԻՐԵԼԻ ՀԵՐՈՍ.	.	.	.	25	»
17. ՍԱՍՈՒՆՑԻ ՑՈՎՆԱՆ.	.	.	.	30	»
18. ԽՈՒԼ, ԽԱԶԻԿ, բ. տպ.	X	.	.	25	»
19. ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐ. Ա. կապուկ.	.	.	.	40	»
20. ՓՈՔՐՈԴԻ ԲԱՐԵԿԱՍՆԵՐ.	X	.	.	15	»
21. ՎԱՐԴԱՆ. ՂԵՒՈՆԻ. ՄԱՍԻՆ պատկերներով	30	.	.	»	
22. «ՍԻՐՏ» գրքից Ծնողների նամակները որդուն	15	.	.	»	
23. ՎԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ գրքի գոհարներից	.	.	.	10	»
24. ՈՍԿԵԾԱՄԻԿ. պատկերով.	X	.	.	30	»

Թիֆլիսի գրախանութեանում վաճառում են  
մեր կազմած դասագրքերը

1. ԿՐՈՆԻ ԴԱՍԱՑՈՒԹԵԻՆ, ա. բաժ. ձեռնարկ  
ուսուցիչների համար, գինը. . . . . 40 կ.
2. ԿՐՈՆ. ա. տարի. բարոյախոսական առակներ  
և Յիսուսի կեանքից պատմուածներ. 15 »
3. ԿՐՈՆ. բ. տարի. Նահապեաների կեանքից  
մինչև Յովսէփի մահը. . . . . 20 »
4. ԿՐՈՆ. գ. տարի. Մովսէսից մինչև թագա-  
ւորութեան բաժանումը. . . . . 35 »
5. ԿՐՈՆ. դ. տարի. Մարգարէներ և հրէից աղ-  
դի վիճակը մինչև Հերովդէս . . . . . 40 »

Փատրաստ են տպագրութեան

6. Յիսուսի կեանքը մինչեւ Համբարձում. ե. տարի
7. Առաքեալների ծամանակաշրջան եւ Հայաստանի լու-  
սաւորիչներ. գ. տարի:

ԴՐԱԿ

Հ - Հ 1 - 19  
Հ - Հ 8 - 19

ՀՀ Ազգային գրադարան



NL0310473

79.14

